ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.06.2021 Ք. Իջևան

Մասնակցում էին գիտխորհրդի 24 անդամներից 20-ը

ՕՐԱԿԱՐԳ

1. Ավարտական կուրսերի քննաշրջանի արդյունքների ամփոփում: (Զեկ. Կ. Պողոսյան)
2. Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների ներկայացում և քննարկում: (Զեկ. ամբիոնի վարիչներ)
3. ԿԾ պատասխանատուների գործունեության հաշվետություն: (Զեկ. ԿԾ պատասխանատուներ)
4. 2021թ. ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքների ամփոփում: (Զեկ. Կ. Պողոսյան)
5. 2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների ներկայացում: (Զեկ. ամբիոնի վարիչներ)
6. Ուսանողական խորհրդի (ՈՒԽ) նախագահի կատարած աշխատանքների ներկայացում և ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահի հաշվետվություն: (Զեկ. ՈՒԽ և ՈՒԳԸ նախագահներ)
7. Ֆակուլտետի ամբիոնների վարիչների ամփոփիչ հաշվետվություն: (Զեկ. ամբիոնի վարիչներ)
8. Ընթացիկ հարցեր:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Կ. Պ. Պողոսյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 7 զեկուցվող և մեկ ընթացիկ հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցներն անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Կ. Պողոսյանը: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Քննությունների գնահատման ձևը հանրագումարային է, և ըստ ամբիոնների՝ առկա է հետևյալ պատկերը.

«Պատմություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսի 8 ուսանողից ‹‹Հայ և համաշխարհային արվեստի պատմություն›› առարկայից 4 ուսանող ստացել է 20 միավոր, 1 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 2 ուսանող՝ 10 միավոր: ‹‹Քաղաքակրթությունների տեսություն›› առարկայից 3 ուսանող ստացել է 20 միավոր, 1 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր: ‹‹Նոր և նորագույն ժամանակների սոցիալ-քաղաքական պատմություն›› առարկայից 3 ուսանող՝ 20 միավոր, 1 ուսանող՝ 19 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 2 ուսանող՝ 8 միավոր:

«Հայոց լեզու և գրականություն» կրթական ծրագրի չորրորդ կուրսը /10 ուսանող/ 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակում քննություններ է հանձնել «Արդի հայ գրականության պատմություն», «Դարձվածաբանություն», «Տրամաբանություն», «Նորագույն շրջանի հայ պոեմը» առարկաներից: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը կազմակերպված էր պատշաճ կերպով, քննություններն իրականացվել են ժամանակացույցի համաձայն: Ուսանողների կողմից հարցաշարերին առնչվող խնդիրները լուծվել են ժամանակին, և տարաձայնություններ չեն եղել: Քննություններին մասնակցած 10 ուսանողներից դրական են հանձնել 10-ը, լուծարքներ չկան, առաջադիմությունը կազմում է 100%:

«Օտար լեզու և գրականություն» կրթական ծրագրի IV կուրսի 24 ուսանողից «Թարգմանության տեսություն և պրակտիկա» առարկայից 2 ուսանող ստացել Է 19 միավոր, 2 ուսանող՝ 18 միավոր, 1 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 2 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 12 միավոր, 3 ուսանող՝ 11 միավոր, 2 ուսանող՝ 10 միավոր, 4 ուսանող՝ 9 միավոր, 4 ուսանող՝ 8 միավոր: «Անգլերեն- 8» առարկայից 1 ուսանող ստացել է 18 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 5 ուսանող՝ 16 միավոր, 2 ուսանող՝ 15 միավոր, 3 ուսանող՝ 14 միավոր, 2 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 11 միավոր, 2 ուսանող՝ 10 միավոր, 3 ուսանող՝ 9 միավոր: «Ֆրանսերեն- 8» առարկայից 7 ուսանող ստացել է 20 միավոր, 3

ուսանող՝ 19 միավոր, 2 ուսանող՝ 18 միավոր, 2 ուսանող՝ 17 միավոր, 1 ուսանող՝ 16 միավոր, 1 ուսանող՝ 15 միավոր, 1 ուսանող՝ 14 միավոր, 1 ուսանող՝ 13 միավոր, 3 ուսանող՝ 12 միավոր, 1 ուսանող՝ 10 միավոր, 1 ուսանող՝ 9 միավոր, 1 ուսանող՝ 8 միավոր:

Զեկուցողը նշեց, որ չորրորդ կուրսեցիները բավականին լավ էին նախապատրաստվել, որի արդյունքում ստացան բարձր միավորներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Ավագյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Մ. Զուրաբյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա IV կուրսի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ամբիոնի վարիչները: Զեկուցողները ներկայացրեցին ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունները:

Ամբիոնի վարիչները ներկայացրին ամբիոնների անհատական բեռնվածությունը և ավելացրին, որ ժամաքանակները հիմնականում բաշխված են: Նշվեց, որ հաշվի են առնվել դասախոսների մասնագիտական կարողությունները, նախորդ տարիների դասավանդման փորձը: Յուրաքանչյուր դասախոս ստացել է 2021-2022թթ. ուստարվա իր նախնական բեռնվածությունը: Զեկուցողները նշեցին, որ կան նաև թափուր առարկաներ, և կա որոշ դասընթացների դասախոսների պակաս: Այս հարցը ուշադրության կենտրոնում է, և մինչ ուսումնական տարվա սկիզբը հարցին դրական լուծում կտրվի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, բ. գ. թ. , դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ֆակուլտետի մասնագիտական ամբիոնների հաջորդ ուստարվա անհատական բեռնվածությունների նախնական բաշխման գործընթացը համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ԿԾ պատասխանատուները: Նրանք ներկայացրեցին ԿԾ պատասխանատունե-րի գործունեության հաշվետությունները:

Կրթական ծրագրերի ղեկավարները նշեցին, որ ստեղծվել են աշխատանքային խմբեր, եղել են հանդիպումներ, քննարկումներ: Աշխատանքները հիմնականում պատրաստ են, կատարվում են մասնակի փոփոխություններ: Առաջիկայում նախատեսվում է ստեղծել կրթական ծրագրերի մոնիթորինգի խմբեր՝ բացթողումները շտկելու, արդյունավետությունը գնահատելու նպատակով:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ամբիոններում իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկավ ֆակուլտետի դեկան Կ. Պողոսյանը: Նա ներկայացրեց, որ ֆակուլտետի առկա ուսուցման չորս կրթական ծրագրերով և հեռակա ուսուցման երեք կրթական ծրագրերով իրականացվել են ավարտական աշխատանքների պաշտպանություններ: Նա նշեց, որ

Հայաստանում տիրող արտակարգ իրավիճակի պայմաններում համալսարանի, ֆակուլտետի և ամբիոնների ղեկավարները պատշաճ ձևով և բարձր մակարդակով կազմակերպել էին ավարտական աշխատանքների պաշտպանությունները, պահպանվել են անհրաժեշտ հակահամաճարակային պայմանները: Բոլոր ուսանողները հնարավորություն են ունեցել ներկայացնել իրենց աշխատանքները և տեսասահիկային հանդեսները: Ուսանողներն իրենց ավարտական աշխատանքներում պահպանել էին նախատեսված չափորոշիչները: Ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ առկա էին ղեկավարների և գրախոսների կարծիքները:

«Հայոց պատմության և հասարակագիտության» ամբիոնը ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություն է իրականացրել «Պատմություն» մասնագիտության առկա և հեռակա ուսուցման համակարգերում: Առկա ուսուցմամբ ավարտական աշխատանք է պաշտպանել 8 ուսանող: Ուսանողներից 4-ը ստացել է «գերազանց», 1-ը՝ «լավ», 3-ը՝ «բավարար» գնահատական: «Անբավարար» գնահատական չի գրանցվել:

Հեռակա ուսուցման բաժնում 31 ուսանող պաշտպանել է ավարտական աշխատանք: «Գերազանց» գնահատական ստացել է 1 ուսանող, 6-ը՝ «լավ», 19-ը՝ «բավարար»: «Անբավարար» գնահատական է ստացել 3 ուսանող, 2 ուսանող չի ներկայացել:

Զեկուցողն ավելացրեց, որ քննական հանձնաժողովի նախագահ, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմ. գիտ. դոկտոր Սամվել Անդրանիկի Պողոսյանը հիմնականում գոհ է մնացել ավարտական աշխատանքների գիտական մակարդակից, ուսանողների պատրաստվածությունից ու ցուցաբերած գիտելիքներից: Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ համավարակի պայմաններում ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարությունն ու մասնագիտական ամբիոնը պատշաճ ձևով և բարձր մակարդակով էին կազմակերպել ավարտական աշխատանքների պաշտպանությունը: Պահպանված էին ավարտական աշխատանքների համար նախատեսված չափորոշիչները: Մասնագետների պատրաստման որակի հետագա բարելավման ուղղությամբ հանձնաժողովի նախագահն առաջարկել է, որ ավարտական աշխատանքներում շրջանառվի առավել ծավալուն մասնագիտական գրականություն:

Զեկուցողը ներկայացրեց, որ «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի կողմից ուսումնական տարեսկզբին արդեն վերջնական հաստատվել էին ավարտական աշխատանքների թեմաները, նշանակվել էին ղեկավարներ: Սահմանվել էր գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Համավարակի ընթացքում ղեկավարների հետ աշխատանքները շարունակվել են թե՛ համալսարանում, թե՛ Zoom հարթակում և էլեկտրոնային այլ միջոցներով:

Զեկուցողը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ավագ գիտաշխատող, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Եվա Ժորայի Մնացականյանը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 10 շրջանավարտ. 7-ը ստացավ «գերազանց», 3-ը՝ «լավ»: Զեկուցողը ավելացրեց, որ հանձնաժողովի նախագահը հետագա բարելավման ուղղությամբ առաջարկել է առավել մեծ տեղ հատկացնել հետազոտական բաղադրիչին՝ ապահովելով ինքնուրույնությունը, եզրակացությունները ձևակերպել ավելի սեղմ և որոշակի, եզրակացությունները համապատասխանեցնել առաջադրված խնդիրներին, գրականության ցանկը հարստացնել վերջին շրջանում հրատարակված համապատասխան նյութերով:

«Օտար լեզուների» ամբիոնի կողմից մինչև ուսումնական տարվա սկիզբը կազմվել և հաստատվել են ավարտական աշխատանքների թեմաները: Սահմանվել է գրաֆիկ՝ ավարտական աշխատանքների ղեկավարների և ուսանողների հանդիպման համար: Սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ ուսանողները հանդիպել են իրենց ղեկավարների հետ, իրականացվել է ավարտական աշխատանքների նախապաշտպանություն: Այստեղ ևս ղեկավարների հետ աշխատանքները շարունակվել են թե՛ համալսարանում, թե՛ Zoom հարթակում:

Զեկուցողը նշեց, որ ընթացիկ ուստարում ավարտական աշխատանքների պաշտպանություններն անցել են բարձր մակարդակով, որն ընդգծել է նաև քննական հանձնաժողովի նախագահը: «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի անգլերեն լեզվի ուսուցման ամբիոնի վարիչ, պրոֆեսորի պաշտոնակատար,

մ.գ.թ. Անահիտ Բաղդասարի Լալաբեգյանը: Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 24 շրջանավարտ. 16-ը ստացավ «գերազանց», 6-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար»:

Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ քննության ընթացքը դրական էր: Ավարտական աշխատանքները կատարվել էին բարձր մակարդակով: Փաստական նյութի վերլուծության արդյունքում ստացված եզրակացությունները համոզիչ էին: Հարցադրումներին շրջանավարտները պատասխանում էին վստահ: Բողոքարկման դեպքեր չեն եղել:

Զեկուցողը անդրադարձավ նաև «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանությանը: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը գլխավորում էր Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Լուիզա Խորենի Միլիտոսյանը:

Առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 41 շրջանավարտ. 9-ը ստացավ «գերազանց», 30-ը՝ «լավ», 2-ը՝ «բավարար»:

Հեռակա ուսուցման համակարգում մասնակցում էր 36 շրջանավարտ. 10-ը ստացավ «գերազանց», 12-ը՝ «լավ», 14-ը՝ «բավարար»:

Հանձնաժողովի նախագահի կարծիքով՝ համալսարանը և ամբիոնը մանրակրկիտ նախապատրաստել էին ամփոփիչ ատեստավորման գործընթացը: Աշխատանքների թեմաներն արդիական էին և ներառում էին իրենց մասնագիտական ոլորտը: Աշխատանքն ընդգրկում էին տեսական և գործնական հետազոտություններ: Հետագա բարելավման նպատակով առաջարկվել է ակտիվացնել կապը դպրոցների հետ՝ հնարավորություն տալով ուսանողներին ավելի երկարատև իրականացնել իրենց գործնական հետազոտությունները: Ցանկալի կլիներ, որպեսզի վերանայվեին ուսանողների կողմից իրականացված փորձարարական դասերի նպատակները՝ դրանք չափելի և իրատեսական վերաձևակերպելով:

Զեկուցողը նաև ներկայացրեց «Հոգեբանություն» կրթական ծրագրի հեռակա ուսուցման բաժնի այս տարվա շրջանավարտների ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովը

գլխավորում էր ՀՖԿՍՊԻ պրոֆ. Լալայանի անվան սպորտի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ, հ.գ.թ. Անահիտ Գուրգենի Ստեփանյանը:

Ամփոփիչ ատեստավորմանը մասնակցում էր 29 շրջանավարտ. 1-ը ստացավ «գերազանց», 14-ը՝ «լավ», 14-ը՝ «բավարար»:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Վ. Աղաբաբյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

Զեկուցողներն արձանագրեցին, որ ավարտական աշխատանքների պաշտպանությունը բոլոր մասնագիտություններից ունեցել է պատշաճ ակադեմիական մակարդակ և բավարար կազմակերպվածություն:

Ուսանողներն ավարտական աշխատանքների պաշտպանությանը ներկայացել են պատրաստ: Մեծամասնությունը անհրաժեշտ չափով ուսումնասիրել էր պահանջվող գրականությունը և օժանդակ նյութերը: Կային նաև թերի պատրաստված ուսանողներ: Վերջիններս հիմնականում ուսումնառության ընթացքում ունեցել են ակադեմիական ցածր առաջադիմություն: Առաջընթացը պայմանավորված է մի շարք կարևոր աշխատանքներով, որոնք տարիների ընթացքում կանոնավորապես իրականացվում են ամբիոններում: Առաջին հերթին դրական դեր են ունեցել նախորդ ամիսներին կազմակերպված նախապաշտպանությունները: Ամբիոնների վարիչները գործող ժամանակացույցով իրականացրել են նախապաշտպանություններ /որոշ ամբիոններում՝ մի քանի անգամ/, որոնց ընթացքում շտկվել են նկատված սխալներն ու թերությունները: Որակի բարձրացմանն անշուշտ նպաստել են նաև ավարտական և հետազոտական աշխատանքներ կատարելու վերաբերյալ մեթոդական ձեռնարկների առկայությունը ամբիոններում, ինչպես նաև գնահատման հստակ չափանիշերով առաջնորդվելը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները գնահատել բավարար:

ԼՄԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ հանդես եկան ՀԲ ղեկավարները: Նրանք ներկայացրեցին 2-րդ կիսամյակում իրենց ղեկավարությամբ իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները և նշեցին, որ հետազոտական աշխատանքն ուսանողների համար եղել է մասնագիտական և ուսուցողական հիանալի փորձ: Նրանք նշեցին, որ 1-ին կիսամյակում ՀԲ առաջին անգամ էր անցկացվում, կային որոշակի բացթողումներ և թերացումներ, որոնք լրացվել և շտկվել են երկրորդ կիսամյակում: Ղեկավարները նաև շեշտեցին, որ ուսանողների դրական արձագանքները թույլ են տալիս հետազոտական աշխատանքների դերը համարել հաջողված:

Հետազոտական աշխատանքի ղեկավարները նշեցին, որ հետազոտական աշխատանքների կատարման համար ուսանողների մոտ զգացվել է փորձի պակաս, մասնավորապես ցածր կուրսերի ուսանողների մոտ, որոնք նախկինում չեն կատարել կուրսային աշխատանք, և նման աշխատանք իրականացնելը նրանց համար նորություն էր, այն էլ մեկ դասընթացի շրջանակներում:

Բավական մեծ աշխատանք է կատարվել թեմաների ընտրության գործում: Նման աշխատանքների միջոցով ուսանողների մոտ ձևավորվում են տվյալներ ձեռք բերելու, մտածելու, հետազոտելու, վերլուծելու, համադրելու, եզրակացություններ կատարելու կարողություններ, որոնք ուսանողներին ուղղորդում են ինքնուրույն ուսումնասիրելու հետազոտվող ոլորտում առկա ժամանակակից գիտական ձեռքբերումները և դրանք ներառելու իրենց աշխատանքներում:

Ձեկուցողները նշեցին, որ հետազոտական աշխատանքների թեմաներն ընտրելիս հաշվի են առել նաև կուրսի ուսանողների հնարավորությունները և հանձնարարել են նրանց հասանելի աշխատանքներ: Հաշվի է առնվել այն փաստը, որ հետազոտական աշխատանքի իրականացման համար նյութերի և աղբյուրների ձեռք-բերման հիմնական կիրառվող միջոցը ուսանողների համար լինելու է համացանցը՝ համավարակով պայմանավորված:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Ք. Հարությունյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., դոցենտ Հ. Վանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2-րդ կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի վեցերորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկան ֆակուլտետի ուսանողական կառույցների ղեկավարները: (Հաշվետվությունները կցվում են՝ **Հավելված 5, Հավելված 6**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ՈՒԽ-ի և ՈՒԳԸ-ի ղեկավարների 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի հաշվետվությունները ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի յոթերորդ հարցի մասին զեկուցումով հանդես եկան ամբիոնի վարիչները (Հաշվետվությունները կցվում են՝ **Հավելված 1, Հավելված 2, Հավելված 3, Հավելված 4**):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Բ.գ.թ., դոցենտ Կ. Պողոսյանը, բ.գ.թ., դոցենտ Լ. Թումանյանը, ասիստենտ Ա. Մարդանյանը, բ.գ.թ., ասիստենտ Մ. Սարուխանյանը, պ.գ.թ., դոցենտ Ն. Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ամբիոններում իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Կ. Պողոսյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ Վ. Աղաբաբյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստորաբաժանման անունը՝ Օտար լեզուների ամբիոն Ամսաթիվ՝ 04.06.2021

ՌՕ գործողությունը	**Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում**	**Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)**	**Ի՞նչ չի իրականացվել և ինչո՞ւ**	**Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում**
1.2. 2. Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:		Ուստարվա ընթացքում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:

1.2.3. Կրթափորձի կարգով ներդնել արդյունավետ և ձևավորվող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Ուստարվա սկզբին մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում): Երկրորդ կիսամյակում համաճարակի բռնկման պատճառով գնահատման գործիքներում տեղ են գտել փոփոխություններ, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, հաստատվել, իսկ արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի գիտխորհրդին՝ հաստատման:	Չեն ստեղծվել համապատասխան ձեռնարկներ դրանց անհրաժեշտության բացակայության պատճառով:	Ոչինչ չի պլանավորվել:
1.2.5. Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Ուսանողների մասնագիտական գիտելիքների ապահովում, ուսումնառության գործընթացի բարելավում:	Կազմվել են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ)՝ բոլոր առարկայական դասընթացների համար:		Ըստ անհրաժեշտության՝ վերանայել և փոփոխել:
1.2. 6. Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանքների) գրագողությունը կանխելու	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից: Իրականացվել է ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական		Ուստարվա ընթացքում իրականացվել են հանդիպումներ ուսանողների հետ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելել ու կանխել մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից:

նպատակով:		վերահսկողություն: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից բարձրարժեք ավարտական աշխատանքներ, որոնց մասին իր գոհունակությունն է հայտնել ավարտական աշխատանքների պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահ, բ. գ. թ., դոցենտ Աննա Լալաբեգյանը (առկա է գրավոր հաշվետվությունը):		
1.3. 3. Գործադրել ԵՊՀ դասա-խոսական կազմի գոր-ծունեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամ-բիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, արվել են հետևություններ:		Ուստարվա ընթացքում ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնել նկատված թերությունները, անել դիտարկումներ, քննարկել ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, անել հետևություններ:
1.4. 1. Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառու-թյան ռեսուրսների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորություն-ների կիրառություն ուսուցման գործընթացում:	Երկրորդ կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի միջոցով, ինչպես նաև ԵՊՀ e-learning համակարգի միջոցով:		Նախատեսել ենք օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները անհրաժեշտության դեպքում առցանց քննությունները առավել արդյունավետ կազմակերպելու համար:
1.4. 2. Ձևավորել անհրաժեշտ տեխ-նոլոգիական և մեթոդական	Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների ներդրում:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով հիմնականում		Նախատեսել ենք օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները անհրաժեշտության դեպքում

հենք՝ ուսում-նառության էլեկտրոնային ռեսուրսների մշակման և ներդրման համար:		իրականացվել են դասընթացները:		առցանց քննությունները առավել արդյունավետ կազմակերպելու համար:
1.4. 3. Վերապատրաստել դասա-խոսական կազմը ուսու-մնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:	Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով ապահովվել են դասընթացները:		Նախատեսել ենք օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները անհրաժեշտության դեպքում առցանց քննությունները առավել արդյունավետ կազմակերպելու համար:
1.4.5.Ապա-հովել կրթական ծրագրերը ուսումնառու-թյան էլեկտրոնային ռեսուրսներով:	Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազ-մակերպում:	Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:		Ուսումնական տարվա ընթացքում շարունակել ծրագրերի համար էլեկտրոնային տարբերակների մշակումն ու տեղադրումը համացանցում:
1.4.6.ա/ Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ երիտասարդ դասախոսների համար:	Երիտասարդ դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:	Ա. Չուբարյանը, Գ. Մուրադյանը, Ն. Երնջակյանը իրականացրել են վարպետության դասընթացներ “Կորպուսային Լեզվաբանություն”, “Հաղորդակցության դիվանագիտություն”, “Ինքնության դրսևորումները պատմալեզվամշակութային համատեքստում” թեմաներով		Ուսումնական տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների ուժերով նախատեսվել են այլ թեմաներով դասախոսություններ:
1.4.6.բ/ Ամրապնդել միջամբիոնային կապերը:	Միջամբիոնային կապերի ամրապնդմամբ ձեռք բերել համատեղ գործունեությամբ	Հայոց լեզվի և գրականության ամբիոնի հետ համագործակցելով՝ ամբիոնի դասախոսները ստանձնել են արտասահմանյան ժամանակակից հայտնի մի		Ընթացքի մեջ է:

	պայմանավորված գիտական արդյունքներ, բարձրացնել Իմ-ի վարկանիշը:	շարք հեղինակների տարբեր ստեղծագործությունների՝ անգլերենից հայերեն թարգմանությունների խմբագրական աշխատանքներ:		
1.4.6.գ/ Աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:	Ամբիոնի դասախոսական աշխատակազմի խորհրդատվություն և աջակցություն ուսանողներին, ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացում, մասնագիտության հեղինակության բարձրացում:	Ամբիոնի նախաձեռնությամբ 2021 թ. մայիսի 20-21 ԱՄՆ Խաղաղության կորպուսի անգլերենի ուսուցման ծրագրի կամավոր Պամելա Վուոթքինսը իրականացրեց առցանց դասընթաց "Ակադեմիական գրավոր խոսք" թեմայով, որին մասնակցեցին նաև "Գլաձոր' համալսարանի ուսանողները: Մասնակիցները ստացել են հավաստագրեր:		Ուսումնական տարվա ընթացքում աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:
1.4.6.դ/ Ապահովել հեռակա ուսուցման դասընթաց-ները համապա-տասխան էլեկտրո-նային ռե-սուրսներով:	Հեռակա ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպում:	Հեռակա ուսուցման դասընթացների համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ:		Ուսումնական տարվա ընթացքում ապահովել հեռակա ուսուցման դասընթացները համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:
1.4.7.Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականաց-վող դասընթաց-ները:	Արդի պահանջներին համապատասխանող ուսուցման ապահովում:	Առաջին կիսամյակում համավարակի պատճառով ուսանողների հետ հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակ միջոցով:		Նախատեսել ենք օգտագործել **Google forms** ձևաչափի հնարավորությունները առցանց քննություններ կազմակերպելու համար:
2.1. 1. Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարա-	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակի կազմում և գիտահետազոտ	2020-2021 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսների հեղինակությամբ հրատարակվել է 8 գիտական հոդված Գիտահետազոտական գործունեության արդյունավետության	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշ-	Անորոշ է:

կումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշ-ներով:	ական գործունեության արդյունավետության բարձրացում:	գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել:	ների սանդղակ չի կազմվել, քանի որ դժվարանում ենք դեռ հստակ պատկերացնել գնահատման չափանիշները:	
2.1. 2. Մշակել և ներդնել համապատասխան մեխա-նիզմներ՝ ազ-դեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարա-կումները խրախուսելու համար:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում: Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակվող հոդվածների քա-նակի ավելացում:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապա-րակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապա-րակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել, քանի որ դեռ հստակ չենք պատկերացնում, թե ինչպես կարելի է խրախուսել հեղինակներին:	Անորոշ էլ:
2.1. 3. Խրախուսել ՈՒԳԸ շրջանակ-ներում ուսա-նողների գիտահետազոտական աշ-խատանքների կատարումը և ղեկավա-րումը:	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում գիտական աշխատանքի նկատմամբ և նրանց կողմից իրականացվող գիտական	Ամբիոնի ուսանողները , ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ հետ համատեղ կազմակերպել են «Սովորում ենք անգլերեն», «Սովորում ենք ռուսերեն», «Սովորում ենք Ֆրանսերեն» խմբակներ:		Ուսումնական տարվա ընթացքում խրախուսել ՈՒԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքնե-րի կատարումը և ղեկավարումը:

	աշխատանքների ծավալի մեծացում:			
2.2.1.Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրակա-նացմանը:	Մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապի ամրապնդում՝ մարզում գիտական-մշակութային միջավայրի զարգացման նպատակով:		Ոչինչ չի արվել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերի և հետաքրքրությունների բացակայության պատճառով:	Ուսումնական տարվա ընթացքում աշխուժացնել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերն ու հետաքրքրությունները:
2.2. 2. Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջա-տար գիտաշխատողներին:	Համագործակցային փոխհարաբերություններ ձևավորում տարածաշրջանային բուհերի հետ:	«Գլաձոր» համալսարանի «Օտար լեզուների» ամբիոնի հետ ձեռք բերված համաձայնության շրջանակներում իրականացվել են երկու բուհերի ուսանողների մասնակցությամբ դասընթացներ :պայմանավորվածություն է ձեռք բերվել ամառային գիտական ճամբար կազմակերպելու վերաբերյալ:		Պայմանավորվածություն է ձեռք բերվել ամառային գիտական ճամբար կազմակերպելու վերաբերյալ:
2.2. 3. Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մաս-նակցությամբ հետազոտական և կրթա-կան ծրագրեր:	Տարածաշրջանի կրթօջախների կարիքների վերհանում և այդ կարիքներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերի մշակում:	Արդյունք չի արձանագրվել:		

2.3. 1. Խրախուսել միջազգային գիտական շտեմա-բաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատող-ների հրապա-րակումները:	Միջազգային գիտական շտե-մարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսների հոդվածների հրապարակում և դրանց թվի աճ:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել, քանի որ միջազգային շտե-մարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսները հրապարակումներ չեն ունեցել:	Անորոշ է, ոչինչ չենք պլանավորել:
2.3. 2. Ավելացնել օտար լեզուներով հրատա-րակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում:	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում օտար լեզուներով հոդվածների թվի աճի ապահովում:	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն իր գործունեությունը անորոշ ժամանակով կասեցրել է: Ամբիոնի դասախոսներ Գ.Մուրադյանը, Ա. Չուբարյանը հրատարակել են հոդվածներ միջազգային ամսագրերում:		Պլանավորվում է ավելացնել միջազգային ամսագրերում հրատարակվող հոդվածների թիվը:
2.3.3.Կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ, հանրապետական, միջազ-գային գիտաժո-ղովներ, օժանդակել արտասահ-մանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատող-ների մասնակցությանը:	Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում տարբեր գիտական կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցության աճ:	Ամբիոնի դասախոսները մասնակցել են 2020 17-18 դեկտեմբերի DBMR առցանց միջազգային գիտաժողովին; 2020 փետրվարի 9-12 Project - based Learning in FLT միջազգային վեբինարին: «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ակտիվորեն մասնակցել են ամբիոնի կողմից կազմակերպված միջոցառումներին, այդ թվում ՝ “Ուսուցչի տոն” (առցանց), «Ամանորյա միջոցառում»(առցանց), «Կանանց միջազգային տոն», իրականացվել են մի շարք բաց դասեր		Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ:

2.3. 4. Աջակցել արտասահմանյան գործընկերների հետ համագործակցության շարունակականության ու խորացմանը:	Համագործակցություն արտասահմանյան գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ:	Պայմանավորվածություն է ձեռք բերվել ԱՄՆ AVN կազմակերպության հետ կամավորական առցանց երեքամսյա անգլերենի դասընթացներ կազմակերպելու վերաբերյալ:		Ավելացնել դասընթացների շրջանակը, ներառելով այնպիսի դասընթացներ, ինչպիսիք են TOEFL
4.1.2.Մշակել դասախոսական կազմի համալրման և կատարելագործման երկարաժամկետ ծրագիրը, համաձայն որի՝ կատարելագործել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչները և գործընթացները, ապահովել հիմնական դասախոսական կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությունը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:	Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչների և գործընթացների վերանայում, հիմնական դասախոսական կազմի՝ որակավորման բարձրացման կրթական ծրագրերին պարտադիր և լիարժեք մասնակցություն:	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ամբիոնի դասախոսները մասնակցել են ԵՊՀ հետբուհական կրթության բաժնի, Հայաստանում Բրիտանական Խորհրդի, կողմից կազմակերպված, վերապատրաստման դասընթացներին:	Դասախոսական կազմի համալրման ծրագիր չի մշակվել դրա անհրաժեշտության բացակայության պատճառով:	Անորոշ է:
4.1. 4. Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին	Կրթական ծրագրի վերջնարդյունքների և դրանց համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող	Կրթական ծրագրերի մասնագրերում դրվել են համապատասխան պահանջներ, որոնցով նաև առաջնորդվել է ամբիոնը յուրաքանչյուր դասախոսին տվյալ առարկայով ծանրաբեռնելիս:		Ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի մասնագրերում դնել համապատասխան պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվի ամբիոնի յուրաքանչյուր

ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջ-նարդյունք-ների:	պահանջների ձևավորում:			դասախոս տվյալ առարկայով ծանրաբեռնվելիս:
4.1. 5. Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:	Դասախոսների ներգրավվածություն կրթական նորագույն ծրագրերում:	Պրոֆեսորադասախոսական կազմը նաև մասնակցել է 2021 մայիսին Erasmus + PRINTel, 2021 մարտի 9-16 Pearson ELT Spain and Portugal-ի կողմից կազմակերպված Rising to the Challenge ,Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի օգնությամբ; Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված, Թվային գործիքների ուսուցում,. Համագործակցային ակտիվ ուսուցում լսարանում, Առցանց դասավանդման արդյունավետ մոտեցումներ ;Elsevier webinar series/Researcher Academy;. Academic Integrity 2021 վեբինարներին: Ամբիոնի ասիստենտ Է.Թեմրազյանը 2020թ. դեկտեմբերին մասնակցել է Ավ.Իսահակյանի ծննդյան 145 ամյակին նվիրված առցանց գիտաժողովին		Ուսումնական տարվա ընթացքում ակտիվացնել դասախոսների ներգրավվածությունը կրթական նորագույն ծրագրերում:
4.1. 6. Լրամշակել դասախոսական կազմի ու-սումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	Դասախոսական կազմի ուսում-նական բեռնվա-ծության հաշ-վարկի նորմերի ապահովում:	Դասախոսական կազմի ու-սումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել:	Դասախոսական կազմի ու-սում-նական բեռնվածության հաշ-վարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել, քանի որ գիտխորհրդի կողմից հաստա-տված նորմեր չեն	Անորոշ է:

			վերանայվել:	
8.1. 1. Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:	ԵՊՀ-ի գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնում ու ակտիվացում, մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացում, ինչպես նաև պետական ֆինանսավոր-ման ավելացում:	Ամբիոնի վարիչ բ.գթ. դոց. Ք. Հարությունյանի, ամբիոնի անդամներ բ.գդ. դոց Գ.. Մուրադյանի, բ.գթ. պրոֆ. Ա. Չուբարյանի ԵՊՀ և ԵԼՀ ֆակուլտետի ԼՄՀ ամբիոնի վարիչ բ.գդ. պրոֆ. Շ. Պարոնյանի հետ համատեղ մշակվել և ներկայացվել է Academic Discourse in Cross-Linguistic and Cross-Cultural Context/Գիտական դիսկուրսը միջլեզվաբանական և միջմշակութային համատեքստում գիտական թեման:	Ամբիոնը մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացման, ինչպես նաև պետական ֆինանսա-վորման ավելացման հարցերի վերաբերյալ որևէ արդյունք չունի, քանի որ առայժմ առարկայապես չի պատկերացնում իր անելիքները այդ հարցերում:	Անորոշ է:
8.1. 2. Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցու-թյունը կրթա-կան և գիտահետազոտական դրա-մաշնորհային ծրագրերին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրությունը՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհայի ն ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու ձգտում:	Ամբիոնի վարիչ բ.գթ. դոց. Ք. Հարությունյանի, ամբիոնի անդամներ բ.գդ. դոց Գ.. Մուրադյանի, բ.գթ. պրոֆ. Ա. Չուբարյանի ԵՊՀ և ԵԼՀ ֆակուլտետի ԼՄՀ ամբիոնի վարիչ բ.գդ. պրոֆ. Շ. Պարոնյանի հետ համատեղ մշակվել և ներկայացվել է Academic Discourse in Cross-Linguistic and Cross-Cultural Context/Գիտական դիսկուրսը միջլեզվաբանական և միջմշակութային համատեքստում գիտական թեման:		Անորոշ է:

Ամբիոնի վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոցենտ Քրիստինե Հարությունյան

ՀԱՎԵԼՎԱԾ 2

2020-2021 ՈՒՍՏԱՐՎԱ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ստորաբաժանման անունը՝ Հայոց լեզվի և գրականության ամբիոն Ամսաթիվ 03.06.2020

ՌՕ գործողությունը	**Ի՞նչ արդյունքներ էին ակնկալվում**	**Ի՞նչ արդյունքներ են ձեռք բերվել (նշել փաստերով, օրինակներով, նաև հիմքերով)**	**Ի՞նչ չի իրականաց-վել և ինչո՞ւ**	**Ինչպե՞ս եք պլանավորել իրականացնել և ի՞նչ ժամկետներում**
1.2.2. Զարգացնել մանկավարժա-կան առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմ-ները, նպաս-տել ուսուցման ժամանակա-կից մեթոդների և տեխնոլոգիա-ների ներ-դրմանը:	Դասախոսական կազմի ներուժի զարգացում:	Իրականացվել են փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:		Ուստարվա ընթացքում իրականացնել փոխադարձ դասալսումներ՝ ուսումնասիրելու դասախոսական կազմի ուսումնամեթոդական առաջավոր փորձը:
1.2.3. Կրթափորձի կարգով ներ-դնել արդյու-նավետ և ձևավորվող (ֆորմատիվ)	Ուսանողների գիտելիքների անաչառ գնահատում, բավարարվածություն՝ գնահատման չափորոշիչներից:	Ուստարվա սկզբին մշակվել են գնահատման հստակ չափորոշիչներ, որոնք արձանագրված են դասընթացների ծրագրային փաթեթներում (պորտֆոլիոներում):	Չեն ստեղծվել համապատասխան ձեռնարկներ դրանց անհրաժեշտության	Ոչինչ չի պլանավորվել:

գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնար-դյունքների գնահատման վրա: Ստեղծել համապա-տասխան մեթոդական հենք և ձեռնարկներ:		Երկրորդ կիսամյակում համաճարակի բռնկման պատճառով գնահատման գործիքներում տեղ են գտել փոփոխություններ, որոնք քննարկվել են ամբիոնի նիստերում, հաստատվել, իսկ արդյունքները ներկայացվել են ֆակուլտետի գիտխորհրդին՝ հաստատման:	բացակայության պատճառով:	
1.2.5.Իրականացնել դասընթացների փաթեթների (պորտֆոլիոնների) կիրառումը բոլոր դասընթացների համար՝ ավելացնելով դասախոսի կողմից կիրառվող որակի ապահովման մեխանիզմները:	Ուսանողների մասնագիտական գիտելիքների ապահովում, ուսումնառության գործընթացի բարելավում:	Կազմվել են դասընթացների փաթեթներ (պորտֆոլիոներ)՝ բոլոր առարկայական դասընթացների համար:		Ըստ անհրաժեշտության՝ վերանայել և փոփոխել:
1.2.6.Մշակել և ներդնել ակա-դեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ (այդ թվում՝ ավարտական աշխատանք-ների) գրա-գողությունը կանխելու նպատակով:	Ուսանողի ինքնուրույնության և սեփական կարողությունների ներուժի բարձրացում, ուսանողների ակադեմիական ազնվության ապահովում:	Ուսանողների հետ անցկացվել են զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելվել ու կանխվել են մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից: Իրականացվել է կուրսային և ավարտական աշխատանքներին վերագրվող չափանիշների հետևողական վերահսկողություն: Գրվել և պաշտպանության են ներկայացվել գիտական տեսակետից բարձրարժեք ավարտական աշխատանքներ, որոնց մասին իր գոհունակությունն է հայտնել 2020-21 ուստարվա		Ուստարվա ընթացքում ուսանողների հետ անցկացնել զրույցներ՝ ակադեմիական ազնվության մասին, արգելել ու կանխել մեխանիկական արտագրությունները գիտաուսումնական աղբյուրներից:

		ավարտական աշխատանքների պաշտպանության քննական հանձնաժողովի նախագահ, բան. գիտ. թեկն., դոցենտ Եվա Մնացականյանը (առկա է գրավոր հաշվետվությունը):		
1.3.3.Գործադրել ԵՊՀ դասա-խոսական կազմի գործու-նեության բազմագործոն գնահատման կարգը մասնաճյուղի բոլոր ամ-բիոններում:	Դասախոսական կազմի գործունեության անաչառ գնահատում:	Ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնվել են նկատված թերությունները, արվել են դիտարկումներ, քննարկվել են ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, արվել են հետևություններ:		Ուստարվա ընթացքում ամբիոնային նիստերի, հանդիպումների ժամանակ ըստ անհրաժեշտության բարձրաձայնել նկատված թերությունները, անել դիտարկումներ, քննարկել ուսանողների միջավայրում դասախոսների վերաբերյալ անցկացված սոցհարցումների տվյալները, անել հետևություններ:
1.4.1.Ներդնել ԵՊՀ-ում մշակված վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառու-թյան ռեսուրս-ների առցանց մատուցման համար:	Ժամանակակից առցանց հնարավորություն ների կիրառություն ուսուցման գործընթացում:	Ուստարվա ընթացքում համավարակի պատճառով ուսանողների հետ հիմնականում հեռավար ուսուցում է իրականացվել ZOOM հարթակի միջոցով:		Նոր ոչինչ չենք պլանավորել:
1.4.2.Ձևավորել անհրաժեշտ տեխ-նոլոգիական և մեթոդական հենք՝ ուսում-նառության էլեկտրոնային ռեսուրսների	Ուսումնառության էլեկտրոնային մշակված ռեսուրսների ներդրում:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով հիմնականում իրականացվել են դասընթացները:		Նոր ոչինչ չենք պլանավորել:

մշակման և ներդրման համար:				
1.4.3.Վերապատրաստել դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար:	Կիրառել էլեկտրոնային ռեսուրսներ, ապահովել դասաժամի արդյունավետություն:	Մասնաճյուղում ներդրվել է վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ (ZOOM), որի միջոցով առցանց՝ հեռավար եղանակով ապահովվել են դասընթացները:		Նոր ոչինչ չենք պլանավորել:
1.4.5.Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:	Ուսումնառության գործընթացի արդյունավետ կազ-մակերպում:	Կրթական ծրագրերի համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ և տեղադրվել համացանցում:		Ուսումնական տարվա ընթացքում շարունակել ծրագրերի համար էլեկտրոնային տարբերակների մշակումն ու տեղադրումը համացանցում:
1.4.6.ա/ Ամբիոնի մասնագիտական ներուժով կազմակերպել ուսումնական վերապատրաստման դասընթացներ երիտասարդ դասախոսների համար:	Երիտասարդ դասախոսների մասնագիտական կարողությունների և հմտությունների բարձրացում:	Ոչինչ չի իրականացվել համավարակի պատճառով:	Ոչինչ չի իրականացվել համավարակի պատճառով:	Ոչինչ չի իրականացվել:
1.4.6.բ/ Ամրապնդել միջամբիոնային կապերը:	Միջամբիոնային կապերի ամրապնդմամբ ձեռք բերել համատեղ գործունեությամբ պայմանավորված գիտական արդյունքներ, բարձրացնել Իմ-ի վարկանիշը:	Համավարակի պատճառով ոչինչ չի իրականացվել:	Ոչինչ չի իրականացվել համավարակի պատճառով:	Ոչինչ չի իրականացվել:
1.4.6.գ/ Աջակցել և խրախուսել ուսանողներին՝ մասնակցելու	Ամբիոնի դասախոսական աշխատակազմի խորհրդատվությունն և	Համավարակի պատճառով ոչինչ չի իրականացվել:	Ոչինչ չի իրականացվել համավարակի	Ուսումնական տարվա ընթացքում աջակցել և խրախուսել

մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:	աջակցություն ուսանողներին, ուսանողների մասնագիտական կարողությունների բարձրացում, մասանագիտության հեղինակության բարձրացում:		պատճառով:	ուսանողներին՝ մասնակցելու մարզային և համայնքային տարբեր միջոցառումների, հանրապետական տարբեր գիտաժողովների:
1.4.6.դ/ Ապահովել հեռակա ուսուցման դասընթաց-ները համապա-տասխան էլեկտրոնային ռեսուրսներով:	Հեռակա ուսուցման դասընթացների արդյունավետ կազմակերպում:	Հեռակա ուսուցման դասընթացների համար մշակվել են էլեկտրոնային տարբերակներ:		Ուսումնական տարվա ընթացքում ապահովել հեռակա ուսուցման դասընթացները համապա-տասխան էլեկտրոնային ռեսուրսներով:
1.4.7.Կանոնա-կարգել և ընդ-լայնել առցանց եղանակով իրականացվող դասընթաց-ները:	Արդի պահանջներին համապատասխանող ուսուցման ապահովում:	Ուստարվա ընթացքում համավարակի պատճառով ուսանողների հետ հիմնականում իրականացվել է հեռավար ուսուցում ZOOM հարթակի միջոցով:		Նոր ոչինչ չենք պլանավորել:
2.1.1.Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակի կազմում և գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում:	2020-2021 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսների հեղինակությամբ հրատարակվել է 5 գիտական հոդված (**1. Վ. Ավագյան,** Ղևոնդ Ալիշանը Արշակ Չոպանյանի գնահատմամբ (Ղևոնդ Ալիշանի ծննդյան 200-ամյակի առթիվ), Հայագիտության հարցեր, Եր., 2020, 2(20), էջ 172-180: **2. Վ. Ավագյան**, Ավետիք Իսահակյանի և Արշակ Չոպանյանի առնչություններից, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», 2020 № 3 (33), էջ 10-20: **3. Վ. Ավագյան**, «Արա Գեղեցիկ» ավամդավեպի բանագիտական	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել, քանի որ դժվարանում ենք դեռ հստակ պատկերացնել գնահատման չափանիշները:	Անորոշ է:

		քննությունը, Հայագիտության հարցեր, Երևան, 2021, 1 (22), էջ 169-191: **4. Վ. Ավագյան,** Զ.-Թ դարերի հայ հոգեւոր դասի կերպաւորումը Յովհաննէս Դրասխանակերտցու Պատմութեան մէջ, «Էջմիածին», Ս. Էջմիածին, 2021, №1, էջ 76-90, №2, էջ 58-74): **5.Վ. Աղաբաբյան,** Տասնվեցերորդ Արշակունին և երրորդ ճանապարհը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, N⁰ 1/12/, 2021, էջ 39-54: Գիտահետազոտական գործունեության արդյունավետության գնահատման ցուցանիշների սանդղակ չի կազմվել:		
2.1.2.Մշակել և ներդնել համապատասխան մեխանիզմներ՝ ազդեցության գործակցով ամսագրերում հոդվածների հրապարակումները խրախուսելու համար:	Գիտահետազոտական գործունեության արդյունավետության բարձրացում: Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակվող հոդվածների քանակի ավելացում:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել:	Ազդեցության գործակցով ամսագրերում հրապարակված հոդվածների հեղինակ դասախոսներին խրախուսելու համար համապատասխան կանոնակարգ չի մշակվել, քանի որ դեռ հստակ չենք պատկերացնում, թե ինչպես կարելի է խրախուսել հեղինակների:	Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:
2.1.3.Խրախուսել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազո	Ուսանողների մեջ հետաքրքրության առաջացում գիտական աշխատանքի	ԻՄ-ի ՈւԳԸ-ի և ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժնի ՈւԳԸ-ի հետ ԻՄ-ի հայոց	Համավարակի պատճառով ՈւԳԸ շրջանակներում ուսանողների	Ուսումնական տարվա ընթացքում խրախուսել ՈւԳԸ շրջանակ-

տական աշխա-տանքների կատարումը և ղեկավարումը:	նկատմամբ և նրանց կողմից իրականացվող գիտական աշխատանքների ծավալի մեծացում:	լեզվի և գրականության ամբիոնը և նույն մասնագիտության բոլոր կուրսերի ուսանողները ունեն սերտ կապեր և համագործակցության բարձր ակտիվություն:	գիտահետազոտական աշ-խատանքներ չեն իրականացվել:	ներում ուսա-նողների գիտահետազոտական աշխա-տանքների կատարումը և ղեկավարումը:
2.2.1.Աջակցել գիտահետազոտական կենտ-րոնների հետ տարածաշրջանային նշանակության համատեղ ծրագրերի իրակա-նացմանը:	Մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապի ամրապնդում՝ մարզում գիտական-մշակութային միջավայրի զարգացման նպատակով:	Արդյունք չի արձանագրվել:	Ոչինչ չի արվել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերի և հետաքրքրությունների բացակայության պատճառով:	Ուսումնական տարվա ընթացքում աշխուժացնել մարզի գիտահետազոտական կենտրոնների և անհատ ստեղծագործողների հետ գիտական կապերն ու հետաքրքրությունները:
2.2.2.Նախաձեռնել համագործակցային ծրագրեր տարածաշրջանային բուհերի հետ և դրանցում ներգրավել հանրապետության առաջա-տար գիտաշխատողներին:	Համագործակցային փոխհարաբերություններ ձևավորում տարածաշրջանային բուհերի հետ:	Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել:	Համագործակցային փոխհարաբերություններ տարածաշրջանային բուհերի հետ չեն ձևավորվել մասնագիտական հետաքրքրությունների բացակայության պատճառով:	Անորոշ է, ոչինչ չի պլանավորվել:
2.2.3.Նախաձեռնել տարածաշրջանի ձեռնարկությունների կարիքներին համապատասխան և նրանց մասնակցու-թյամբ հետազոտական և կրթական ծրագրեր:	Տարածաշրջանի կրթօջախների կարիքների վերհանում և այդ կարիքներին համապատասխան հետազոտական և կրթական ծրագրերի մշակում:	Արդյունք չի արձանագրվել:	Ծրագիրը մնացել է թերի, քանի որ ամբիոնի նախաձեռնություններին, այցելություններին, առաջարկություններին համայնքներն առայժմ արձագանք չեն տվել:	Անորոշ է. սպասում ենք դպրոցների տնօրինությունների առաջարկություններին և համավարակի ավարտին:

			Խանգարել է նաև համավարակը:	
2.3.1.Խրախուսել միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում մասնաճյուղի աշխատողների հրապարակումները:	Միջազգային գիտական շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսների հոդվածների հրապարակում և դրանց թվի աճ:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել:	Խրախուսման մեխանիզմներ չեն մշակվել, քանի որ միջազգային շտեմարաններում ընդգրկված ամսագրերում ամբիոնի դասախոսները հրապարակումներ չեն ունեցել:	Անորոշ է, ոչինչ չենք պլանավորել:
2.3.2.Ավելացնել օտար լեզուներով հրատարակվող հոդվածների թիվը «Ակունք» ժողովածուում:	«Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում օտար լեզուներով հոդվածների թվի աճի ապահովում:	Որևէ արդյունք չկա, քանի որ «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն իր գործունեությունը անորոշ ժամանակով դադարեցրել էր, և ժողովածուում ամբիոնի դասախոսներից ոչ մեկը օտար լեզվով կամ թարգմանված գիտական հոդված չի հրապարակել:	Ամբիոնի գիտական հետաքրքրությունների շրջանակը առայժմ դուրս չի եկել միջազգային միջավայր:	Անորոշ է:
2.3.3.Կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ, հանրապետական, միջազգային գիտաժողովներ, օժանդակել արտասահմանյան գիտաժողովներին մասնաճյուղի աշխատողների մասնակցությանը:	Համագործակցային փոխհարաբերությունների ձևավորում տարբեր գիտական կազմակերպությունների հետ: Մասնաճյուղի գիտական վարկանիշի բարձրացում, մասնաճյուղի աշխատակիցների և ուսանողների մասնակցության աճ:	Համավարակի պատճառով ոչինչ չենք կարողացել նախաձեռնել:	Ոչինչ չի իրականացվել համավարակի պատճառով:	Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել գիտական, գիտական-գեղարվեստական միջոցառումներ:

2.3.4.Աջակցել արտասահման յան գործըն-կերների հետ համագործակց ության շարու-նակականությ անն ու խորաց-մանը:	Համագործակցություն արտասահմանյա ն գործընկերների հետ գիտական կամ հետազոտական որևէ ծրագրի շուրջ:	Ոչինչ չի իրականացվել:	Ոչինչ չի իրականացվե լ համավարակ ի պատճառով:	Անորոշ է:
4.1.2.Մշակել դասախոսակա ն կազմի համալրման և կատարելագոր ծման երկարաժամկե տ ծրագիրը, համաձայն որի՝ կատարելագոր ծել դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչներ ը և գործընթացներ ը, ապահովել հիմնական դասախոսակա ն կազմի պարտադիր և լիարժեք մասնակցությո ւնը որակավորման բարձրացման կրթական ծրագրերին:	Դասախոսների պաշտոնների տեղակալման չափորոշիչների և գործընթացների վերանայում, հիմնական դասախոսական կազմի՝ որակավորման բարձրացման կրթական ծրագրերին պարտադիր և լիարժեք մասնակցություն:	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ամբիոնի դոցենտներից **Վաչագան Ավագյանը** մասնակցել է **2** դասընթացի՝ «Անգլերենը ակադեմիական միջավայրում-2-րդ մակարդակ» և «Մասնագիտության արդի հիմնախնդիրները- 2-րդ փուլ» դասընթացներին: **Կարինե Պողոսյանը** մասնակցել է **2** դասընթացի՝ «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված» և «Հակամարտությունների ստեղծարար փոխակերպում»: **Լուսինե Թումանյանը** մասնակցել է **4** դասընթացի՝ «Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասա-վանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնա-ցում», **«Աշխատանքը Zoom հարթակում»,** «Ուսուցման կազմակերպումը GOOGLE APPS-ի և նրա գործի-քակազմի օգնությամբ», «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված»: **Հասմիկ Վանյանը** մասնակցել է **4** դասընթացի՝ **«Աշխատանքը Zoom հարթակում»,** «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված», «Համագործակցային ակտիվ ուսուցում	Դասախոսակ ան կազմի համալրման ծրագիր չի մշակվել դրա անհրաժեշտո ւթյան բացակայությ ան պատճառով:	Անորոշ է:

		լսարանում», «Տեսանյութերը որպես դասավանդ-ման գործիք»: **Վահան Աղաբաբյանը** մասնակցել է **5** դասընթացի՝«Անգլերենը ակադեմիա-կան միջավայրում», «Համագործակցային ակտիվ ուսու-ցում լսարանում», «Աղետների ռիսկերի կառավարում», «Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի օգնությամբ», «Հաղորդակցության դիվանագիտու-թյուն»: **Սիրանուշ Հովհաննիսյանը** մաս-նակցել է **1** դասընթացի՝ «Համա-գործակցային ակտիվ ուսուցում լսարանում»:		
4.1.4.Սահմանել կրթական ծրագրերին հա-մապատասխան դասախոսական կազմի մաս-նագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջ-նարդյունք-ների:	Կրթական ծրագրի վերջնարդյունքների և դրանց համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջների ձևավորում:	Կրթական ծրագրերի մաս-նագրերում դրվել են համա-պատասխան պահանջներ, որոնցով նաև առաջնորդվել է ամբիոնը յուրաքանչյուր դասախոսին տվյալ առարկայով ծանրաբեռնելիս:		Ուսումնական տարվա ընթացքում կրթական ծրագրերի մաս-նագրերում դնել համապա-տասխան պա-հանջներ, որոնցով պետք է առաջնորդվի ամբիոնի յուրաքանչյուր դասախոս տվյալ առարկայով ծանրաբեռնվելի ս:
4.1.5.Դասախոսների համար ստեղծել համապատասխան պայմաններ և	Դասախոսների ներգրավվածություն կրթական նորագույն ծրագրերում:	Դասախոսական կազմի որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրի շրջանակներում ամբիոնի դոցենտներից **Վաչագան**		Ուսումնական տարվա ընթացքում ակտիվացնել դասախոսների ներգրավվածու

խթանող մեխանիզմներ՝ մասնակցելու կրթության բնագավառում իրականացվող նորագույն ծրագրերին:		**Ավագյանը** մասնակցել է «Անգլերենը ակադեմիական միջավայրում-2-րդ մակարդակ» և «Մասնագիտության արդի հիմնախնդիրները- 2-րդ փուլ» դասընթացներին: **Կարինե Պողոսյանը** մասնակցել է **2** դասընթացի՝ «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված» և «Հակամարտությունների ստեղծարար փոխակերպում»: **Լուսինե Թումանյանը** մասնակցել է **4** դասընթացի՝ «Ակտիվ ուսուցում և թվային տեխնոլոգիաները դասա-վանդման գործընթացում՝ մոբայլ ուսումնառություն և խաղայնա-ցում», **«Աշխատանքը Zoom հարթակում»,** «Ուսուցման կազմակերպումը GOOGLE APPS-ի և նրա գործի-քակազմի օգնությամբ», «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված»: **Հասմիկ Վանյանը** մասնակցել է **4** դասընթացի՝**«Աշխատանքը Zoom հարթակում»,** «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված», «Համագործակցային ակտիվ ուսու-ցում լսարանում», «Տեսանյութերը որպես դասավանդ-ման գործիք»: **Վահան Աղաբաբյանը** մասնակցել է **5** դասընթացի՝«Անգլերենը ակադեմիա-կան միջավայրում», «Համագործակցային ակտիվ ուսու-ցում լսարանում», «Աղետների ռիսկերի		թյունը կրթական նորագույն ծրագրերում:

		կառավարում», «Ուսուցման կազմակերպումը Google Apps-ի և նրա գործիքակազմի օգնությամբ», «Հաղորդակցության դիվանագիտու-թյուն»: **Սիրանուշ Հովհաննիսյանը** մաս-նակցել է **1** դասընթացի՝ «Համա-գործակցային ակտիվ ուսուցում լսարանում»:		
4.1.6.Լրամշակել դասախոսական կազմի ու-սումնական բեռնվածության հաշվարկի նորմերը:	Դասախոսական կազմի ուսում-նական բեռնվա-ծության հաշ-վարկի նորմերի ապահովում:	Դասախոսական կազմի ու-սումնական բեռնվածության հաշվարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել:	Դասախոսական կազմի ու-սումնական բեռնվածության հաշ-վարկի նորմերը մնացել են նույնը, և ոչինչ չի փոխվել, քանի որ գիտխորհրդի կողմից հաս-տատված նորմեր չեն վերանայվել:	Անորոշ է:
8.1.1.Ձեռնարկել քայլեր ընդլայնելու մասնաճյուղի մասնակցությունը ԵՊՀ գիտակրթական ծրագրերին՝ նպաստելով մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացմանը:	ԵՊՀ-ի գիտակրթական ծրագրերին մասնաճյուղի մասնակցության ընդլայնում ու ակտիվացում, մասնաճյուղի պետական ֆինանսավորման ծավալների մեծացում, ինչպես նաև պետական ֆինանսավորման ավելացում:	Որևէ արդյունք չի գրանցվել:	Ամբիոնը մասնաճյուղի պետական ֆինանսավոր-ման ծավալների մեծացման, ինչպես նաև պետական ֆինանսա-վորման ավելացման հարցերի վերաբերյալ որևէ արդյունք չունի, քանի որ առայժմ առարկայապ-ես չի պատկերացն-ում իր անելիքները	Անորոշ է:

			այդ հարցերում:	
8.1.2.Ակտիվացնել մասնաճյուղի մասնակցությունը կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին:	Ամբիոնի դասախոսական կազմի հետաքրքրություն՝ կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհների ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու ձգտում:	Որևէ արդյունք չի գրանցվել:	Ամբիոնի դասախոսական կազմը չի դրսևորել որևէ հետաքրքրություն կրթական և գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերով, պետական և միջազգային դրամաշնորհներից ակնկալվող դրամական հոսքերից օգտվելու գործում:	Անորոշ է:

Ամբիոնի վարիչ՝ բան. գիտ. թեկն., դոցենտ **ՎԱՉԱԳԱՆ ԱՎԱԳՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ 3

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2020-2021ԹԹ. ՈՒՍՏԱՐԻ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր մասնագիտություններին՝ մի շարք դասընթացներով «Ընդհանուր մանկավարժություն»,

«Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ», «Դասավանդման մեթոդիկա», «Մանկավարժության տեսություն»:

Ամբիոնի դասախոսական կազմում ընդգրկված քսանութ դասախոսներից վեցը դոկտոր պրոֆեսոր է, տասնվեց գիտությունների թեկնածու, որից տասնմեկը դոցենտ, չորսը՝ ասիստենտ, մեկը՝ դոցենտ, երկուսը՝ ասիստենտ, երեքը՝ դասախոս:

2020թ. սեպտեմբերի ամսին ամբիոնի կողմից՝ համաձայն ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի, կազմվել և հաստատվել է ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

Հաշվետու 2020-2021 ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնագիտական, այնպես էլ ուսումնակազմակերպչական աշխատանքներ:

Կազմվել է ամբիոնային ծանրաբեռնվածությունը, կատարվել են դասաժամերի բաշխում, հաստատվել են դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունները: Ճշգրտվել են համատեղությամբ աշխատող դասախոսների աշխատանքային գրաֆիկները:

Կազմակերպվել և իրականացվել են 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարումը:

Տարեսկզբին վերանայվել և սահմանված կարգով հաստատվել են «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության եզրափակիչ, առանց եզրափակիչ, առանց ընթացիկ գնահատմամբ քննությունների և ստուգարքների հարցաշարերը և ժամանակին տրամադրվել ուսանողներին: Կազմվել և վերանայվել են առարկայական բոլոր ծրագրերը, պորտֆոլիոները՝ որակի ապահովման չափանիշներին ու ուսումնական պլաններին համապատասխան: Առաջին կուրսեցիների համար պատրաստվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և տեղադրվել Մասնաճյուղի կայք-էջում:

Սահմանված կարգով հավաքագրվել են ավարտական աշխատանքների թեմաները, քննարկվել, հաստատվել են ու տրամադրվել ուսանողներին: Մայիս-հունիս ամիսներին նախատեսվել է «Ընդհանուր մանկավարժություն» և «Հոգեբանություն» մասնագիտության ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում նախատեսված են եղել առկա և հեռակա ուսուցմամբ երեք պրակտիկաներ, որից երկուսը եղել են ուսումնական՝ առկա և հեռակա բաժիններում: Առկա ուսուցման բաժնում իրականացվել է առցանց՝ Zoom հարթակի միջոցով: Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները այցելել են Տավուշի մարզի դպրոցներ:

2020-2021թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում ունեցել ենք հետևյալն պատկերը. ‹‹Ընդհանուր մանկավարժություն›› մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 72,73%, II կուրսի առաջադիմությունը՝ 81,82%, III կուրսի առաջադիմությունը՝ 83,33%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 82,93%: ‹‹Ընդհանուր հոգեբանություն›› մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 100%, II կուրսի առաջադիմությունը՝ 100%:

2020-2021թթ. ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքում ունեցել ենք հետևյալն պատկերը. ‹‹Ընդհանուր մանկավարժություն›› մասնագիտության I կուրսի

առաջադիմությունը կազմում է 100.%, II կուրսի առաջադիմությունը՝ 100%, III կուրսի առաջադիմությունը՝ 77,78%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 100%: «Ընդհանուր հոգեբանություն» մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 92,86.%, II կուրսի առաջադիմությունը՝ 100%: Ապրիլ-մայիս ամիսներին վերանայվել է 2021-2025թթ. ուսումնական պլանը, համաձայն որի պետք է կազմվի է նաև 2021-2022 ուսումնական աշխատանքային պլանը, ամբիոնային ծանրաբեռնվածությունը:

Վերանայվել է Ընդհանուր մանկավարժություն և Ընդհանուր հոգեբանություն մասնագիտության կրթական ծրագրերը, որը անցել է փորձաքննություն, կազմվել է նաև 2021թ. ծրագիրը:

Կազմվել է նաև կրեդիտային համակարգով ուսումնառության նոր ուղեցույցը:

Վերապատրաստումներ

Համաձայն ԵՊՀ ԻՄ ՌԾ-ի 1.2.1 խնդրի և ամբիոնի 2020-21 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝ ամբիոնի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն մասնակցում են ինչպես մասնաճյուղի կողմից կազմակերպվող, այնպես էլ մասնաճյուղից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին, աշխատաժողովներին՝ և՛ որպես ունկդիր և՛ որպես դասավանդող:

Կրկին համաձայն 1.2.1. կետի ամբիոնում պարբերաբար անց են կացվել դասալսումներ՝ ինչպես ամբիոնի վարիչ, Կրթական ծրագրի պատասխանատուի կողմից, այնպես էլ կատարվել են փոխադարձ դասալսումներ՝ դասախոսների կողմից:

2020-2021 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսական կազմը մասնակցել է նաև մի շարք վերապատրաստումների, որոնք իրականացվել են հետևյալ դասընթացների միջոցով՝ «Տեսանյութերը որպես դասավանդման գործիք», «Համագործակցային» ակտիվ ուսուցում լսարանում», «Հասարակական երևույթներ, ինստիտուցիոնալացում, և ինստիտուցիոնալ ճգնաժամ, կառավարման հիմնախնդիրներ», «Թվային գործիքների ուսուցում», «Աղետների ռիսկերի կառավարում», «Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները», «Ուսուցման կազմակերպումը GOOGLE APPS-ի և նրա գործիքակազմի օգնությամբ», «Կորպուսային լեզվաբանություն», «Հաղորդակցության դիվանագիտություն», «Ինքնության դրսևորումները պատմամշակութային համատեքստում», «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված:

ԵՊՀ ԻՄ-ում համատեղության կարգով, դասախոսական գործունեություն իրականացնող ԵՊՀ դասախոսական կազմը ևս, մասնակցել է վերապատրաստման դասընթացների, բայց արդեն Մայր բուհում:

Գիտական գործունեություն

Ընթացիկ ուստարում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Ներկայացնում ենք՝

N	Ցուցանիշ	Քանակ
1.	Ամբիոնի գիտական ներուժը /ամբիոնի աշխատակիցների ընդհանուր	**29**

	թիվը/	
2.	**Հրատարակված գիտական հոդվածներ** /ընդհանուր քանակը/	**30**
2.3	Միջազգային վարկանիշավորման համակարգերում ներառված գիտական ամսագրերում	**7**
5.2	Ուսումնական ձեռնարկ	**2**
6	**Մասնակցություն գիտական միջոցառումների /գիտաժողով, նստաշրջան, ցուցահանդես/** Հանրապետական	**8**

Ամբիոնի վարիչի ԺՊ՝ մ.գ.թ., ասիստենտ Լ. Հարությունյան

ՀԱՎԵԼՎԱԾ 4

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

2020-2021ԹԹ. ՈՒՍՏԱՐԻ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Հումանիտար գիտությունների ֆակուլտետի Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը սպասարկում է մասնաճյուղի բոլոր մասնագիտություններին՝ մի շարք դասընթացներով «Հայոց պատմության հիմնահարցեր», «Փիլիսոփայության հիմունքներ», «Իրավունքի հիմունքներ», «Տրամաբանություն», «Քաղաքագիտության հիմունքներ», «Ազգագրության հիմունքներ», «Հայ ազգագրություն», «Կրոնագիտության հիմունքներ», «Բարոյագիտության հիմունքներ»:

Ամբիոնի դասախոսական կազմում ընդգրկված քսաներեք դասախոսներից երկուսը պատմական գիտությունների դոկտոր է, տասներկուսը՝ պատմական գիտությունների թեկնածու, ութը՝ նաև դոցենտ, չորսը՝ ասիստենտ, ինը՝ դասախոս:

2020թ. սեպտեմբերի ամսին ամբիոնի կողմից՝ համաձայն ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի, կազմվել և հաստատվել է ամբիոնի տարեկան աշխատանքային պլանը:

Հաշվետու 2020-2021 ուստարում ամբիոնում կատարվել են ինչպես ուսումնագիտական, այնպես էլ ուսումնակազմակերպչական աշխատանքներ:

Կազմվել է ամբիոնային ծանրաբեռնվածությունը, կատարվել են դասաժամերի բաշխում, հաստատվել են դասախոսների անհատական ծանրաբեռնվածությունները: Ճշգրտվել են համատեղությամբ աշխատող դասախոսների աշխատանքային գրաֆիկները:

Կազմակերպվել և իրականացվել են 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ակադեմիական պարտքերի մարումը:

Տարեսկզբին վերանայվել և սահմանված կարգով հաստատվել են «Պատմություն» մասնագիտության եզրափակիչ, առանց եզրափակիչ, առանց ընթացիկ գնահատմամբ քննությունների և

ստուգարքների հարցաշարերը և ժամանակին տրամադրվել ուսանողներին: Կազմվել և վերանայվել են առարկայական բոլոր ծրագրերը, պորտֆոլիոները՝ որակի ապահովման չափանիշներին ու ուսումնական պլաններին համապատասխան: Առաջին կուրսեցիների համար պատրաստվել է կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույցը և տեղադրվել Մասնաճյուղի կայք-էջում:

Սահմանված կարգով հավաքագրվել են ավարտական աշխատանքների թեմաները, քննարկվել, հաստատվել են ու տրամադրվել ուսանողներին: Մայիս-հունիս ամիսներին նախատեսվել է «Պատմություն» մասնագիտության ինչպես առկա, այնպես էլ հեռակա ուսուցման ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը:

Հաշվետու ուսումնական տարում ամբիոնում նախատեսված են եղել առկա և հեռակա ուսուցմամբ երեք պրակտիկաներ, որից եկուսը եղել են ուսումնական՝ առկա և հեռակա բաժիններում: Առկա ուսուցման բաժնում իրականացվել է առցանց՝ Zoom հարթակի միջոցով: Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները ուսումնասիրել են ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հնավայրերին, պատմամշակութային հուշարձաններին: Այն սկսվել է 22.02.2021-ին և ավարտվել է 03. 05.2021-ին:

Պրակտիկայի ընթացքում ուսանողները ծանոթացել են Տավուշի, Գեղարքունիքի, Սյունիքի, Վայոց Ձորի մարզերի հնավայրերին, պատմա-մշակութային հուշարձաններին, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Սյունիքի, Արարատի, Կոտայքի մարզերի, Երևան մայրաքաղաքի և Արցախի Հանրապետության հնավայրերին, պատմամշակութային հուշարձաններին, ղեկ.՝ Ն. Գրիգորյան: Հեռակա ուսուցման բաժնում 2020-2021 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացքում «Պատմություն» 4-րդ կուրսի 20 ուսանողներ մասնակցել են ուսումնական պրակտիկայի, որը իրականացվել է առցանց՝ Zoom հարթակի միջոցով: Ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները ուսումնասիրել են ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Արցախի Հանրապետության հնավայրերին, պատմամշակութային հուշարձաններին: Պրակտիկան ավարտվել է 21.01.2021-ին՝ ստուգարքով, ղեկ.՝ Ն. Գրիգորյան: Հեռակա ուսուցման բաժնում անց է կացվել նաև արտադրական պրակտիկան, այն իրականացվել է առցանց համակարգով՝ «Zoom» հարթակում՝ հեռավար ուսուցման ձևով, ղեկ.՝ Գ. Գյոզալյան, հեռակ ուսուցում՝ Ն. Մարգարյան: Բոլոր պրակտիկանները իրականացվել են հաջողությամբ:

2020-2021թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքում ունեցել ենք հետևյալն պատկերը. ‹‹Պատմություն›› մասնագիտության I կուրսի առաջադիմությունը կազմում է 93,33%, II կուրսի առաջադիմությունը՝ 100%, III կուրսի առաջադիմությունը՝ 100%, իսկ IV կուրսի առաջադիմությունը՝ 62,50%: Եթե փորձենք պատկերը ներկայացնենք նաև որակական առումով, ապա կստացվի հետևյալն, որ ‹‹Պատմություն›› մասնագիտության I կուրսի կրթական որակը կազմում է 47%, II կուրսինը՝ 56%, III կուրսինը՝ 86%, իսկ IV կուրսինը՝ 63%:

Երկրորդ կիսամյակի քննաշրջանը դեռևս ընթացքի մեջ է ....

Ապրիլ-մայիս ամիսներին վերանայվել է 2021-2025թթ. ուսումնական պլանը, համաձայն որի պետք է կազմվի է նաև 2021-2022 ուսումնական աշխատանքային պլանը, ամբիոնային ծանրաբեռնվածությունը:

Վերանայվել է Պատմություն մասնագիտության կրթական ծրագիրը, որը անցել է փորձաքննություն, կազմվել է նաև 2021թ. ծրագիրը:

Կազմվել է նաև կրեդիտային համակարգով ուսումնառության նոր ուղեցույցը:

Վերապատրաստումներ

Համաձայն ԵՊՀ ԻՄ ՌԾ-ի 1.2.1 խնդրի և ամբիոնի 2020-21 ուսումնական տարվա աշխատանքային պլանի՝ ամբիոնի մի շարք աշխատակիցներ ակտիվորեն մասնակցում են ինչպես մասնաճյուղի կողմից կազմակերպվող, այնպես էլ մասնաճյուղից դուրս կազմակերպվող վերապատրաստումներին, աշխատաժողովներին՝ և՛ որպես ունկդիր և՛ որպես դասավանդող:

Կրկին համաձայն 1.2.1. կետի ամբիոնում պարբերաբար անց են կացվել դասալսումներ՝ ինչպես ամբիոնի վարիչ, Կրթական ծրագրի պատասխանատուի կողմից, այնպես էլ կատարվել են փոխադարձ դասալսումներ՝ դասախոսների կողմից:

2020-2021 ուստարվա ընթացքում ամբիոնի դասախոսական կազմը մասնակցել է նաև մի շարք վերապատրաստումների, որոնք իրականացվել են հետևյալ դասընթացների միջոցով՝ «Տեսանյութերը որպես դասավանդման գործիք», «Համագործակցային» ակտիվ ուսուցում լսարանում», «Հասարակական երևույթներ, ինստիտուցիոնալացում, և ինստիտուցիոնալ ճգնաժամ, կառավարման հիմնախնդիրներ», «Թվային գործիքների ուսուցում», «Աղետների ռիսկերի կառավարում», «Դասավանդման, ուսումնառության և գնահատման հիմունքները», «Ուսուցման կազմակերպումը GOOGLE APPS-ի և նրա գործիքակազմի օգնությամբ», «Կորպուսային լեզվաբանություն», «Հաղորդակցության դիվանագիտություն», «Ինքնության դրսևորումները պատմամշակութային համատեքստում», «Ինչպես պատրաստել և գրել գիտական հոդված:

ԵՊՀ ԻՄ-ում համատեղության կարգով, դասախոսական գործունեություն իրականացնող ԵՊՀ դասախոսական կազմը ևս, մասնակցել է վերապատրաստման դասընթացների, բայց արդեն Մայր բուհում:

Գիտական գործունեություն

Ընթացիկ ուստարում ամբիոնի աշխատակիցները հրատարակել են նաև գիտական աշխատանքներ: Մի շարք հոդվածներով և զեկուցումներով (այդ թվում նաև մենագրություն, դասագիրք) հանդես են եկել պ.գ.դ., պրոֆ. Խաչատուր Ստեփանյան /հոդված՝ Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեությունը Բուլղարիայում (1894-1924 թթ.), «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, Հայաստանի ազգային արխիվի հրատ., 2020, թիվ 2 (129), էջ 30-57: Սևրի պայմանագիրը սփյուռքահայ հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ, «Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը. Քննական հայացք 100-ամյա հեռավորությունից», (Կոլեկտիվ մենագրություն), Երևան, 2020, էջ 185-208: Նիկոլ Դուման. Մտավորական-հայդուկապետը, Առաջաբան, էջ 4-10, Նիկոլ Դուման, Նամականի, Երևան, «Լուսակն», 2021, 336 էջ: ՀՅԴ Վրաստանի ԿԿ-ի 1921 թ. նամակները ՀՅԴ Արտասահմանի Պատասխանատու մարմնին, «ՎԷմ» համահայկական հանդես, Երևան, 2021, թիվ 1, էջ 273-312: Անկախութեան գաղափարի արծարծումը Խորհրդային Հայաստանի մէջ 1920-1930-ական թուականներուն, «Հայաստանի Ա.

Հանրապետութեան 100-ամեակ» (Գիտաժողովի նիւթեր, 21-23 մարտ, 2018), Անթիլիաս, 2021, էջ 420-429: Turkish-Tatar anti-State activities in Kars region of the Republic of Armenia in 1919, “The collapse of empires in the 20th century: new states and new identities”, Yerevan, 2020, 332 p., pp. 54-64: Մենագրություն՝ 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբությունը Հայաստանում, Երևան, «Լուսակն», 2021, 172 էջ/: Պ.գ.թ., դոցենտ Վարդան Ալեքսանյան /Զաքարիա Ա Ձագեցու աթոռակալությունը եվ հայոց թագավորության վերականգնման նախադրյալների ստեղծումը IX դարի կեսերին, Բանբեր Երևանի համալսարանի, Հայագիտություն, 2020, թիվ 2, էջ 33-46/: Պ.գ.թ., դոցենտ Նաթելլա Գրիգորյան /հոդված՝ Ուրարտական սեպագրության վերծանման առկա խնդիրները, Հայագիտական հանդես, Երևան, 2020, թիվ 2/47, էջ 117-130: Պ.գ.թ., դոցենտ Նելլի Մինասյան /հոդված՝ Մուսթաֆա Քեմալի լեզվական բարեփոխումները և նրա դերը Թուրքիայի նորագույն պատմության դասավանդման համատեքստում, Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներ. որոնումներ, հեռանկարներ, լուծումներ, Գիտական հոդվածների ժողովածու 1(4), Երևան, 2021, էջ 247-253: The Collapse of the Ottoman Empire: the Transformations of the Statehood Model, The Collapse of Empires in the 20th Century: New States and New Identities, Colective Monography, Yerevan, 2020, p. 91-102. Գիտաժողով՝ «Անվտանգության արդի հիմնախնդիրները», Եվրոպական համալսարան, գիտաժողով, 26-ը մարտի, 2021, Նեոպանթյուրքիզմը և Հայաստանի Հանրապետության անվտանգային հիմնախնդիրները. որոշ դիտարկումներ/:

Ամբիոնի վարիչի ԺՊ՝ պ.գ.թ., դոցենտ Դ. Թինոյան